ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ավելի բարձր դասային աստիճանի համար վճարվող հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին որոշման նախագծի

Որոշման նախագծի ընդունումը բխում է <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի, <<Համայնքային ծառայության մասին >> օրենքի 26 հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներից՝ համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ավելի բարձր դասային աստիճանի համար վճարվող հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ավելի բարձր դասային աստիճանի համար վճարվող հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին որոշման նախագծի

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ավելի բարձր դասային աստիճանի համար վճարվող հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2023 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: